I

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

XIX դարի առաջին երեսնամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական չորս պատերազմները լիովին չկատարեցին ռուսական զենքի օգնությամբ արևելյան բռնատիրություններից ազատագրվելու հայ ազատագրական շարժման գործիչների ակնկալությունները: Եթե ռուս-պարսկական վերջին պատերազմի արդյունքներն ամփոփող 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին, և արևելահայության համար ստեղծվեցին ապրելու ու զարգանալու անհամեմատ նպաստավոր պայմաններ, ապա ռուս-թուրքական 1828–1829 թթ. պատերազմը չտվեց ակնկալված արդյունքը: Ադրիանապոլսի 1829 թ. սեպտեմբերի 2-ի պայմանագրով, արևմտյան տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ճնշման տակ, որոնց ձեռնտու չէր Ռուսաստանի ուժեղացումն Արևելքում, ի վնաս հայ ժողովրդի շահերի Թուրքիային վերադարձվեցին Էրզրումը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը և Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները, որոնք պատերազմի ընթացքում նվաճվել էին ռուսական զորքերի կողմից: Այսպես ուրեմն. տակավին արդեն Ադրիանապոլսի պայմանագիրը ցույց տվեց, որ Արևմտյան Հայաստանի հարցը սոսկ հայ-թուրքական, նույնիսկ հայ-ռուս-թուրքական հարաբերությունների հարց չէր: Այն սերտորեն առնչվում էր ռուս-թուրքական և արևմտյան տերությունների հարաբերություններին, Մերձավոր Արևելքում նրանց գաղութատիրական, նվաճողական ծրագրերին: Ուստի, հիմնականում այդ ժամանակաշրջանից ի վեր, հանուն իրենց շահերի, մեծ տերությունները պաշտպանել են Թուրքիային ընդդեմ Ռուսաստանի և արևմտահայության ճակատագիրը դրել գալիքի արյունոտ զոհասեղանին:

Ընդհանրապես մեծ տերությունների շահադիտական քաղաքականության ակունքները Մերձավոր և Միջին Արևելքում բավական խորն էին: Օսմանյան կայսրության հետ եվրոպական տերությունների և Ռուսաստանի հարաբերությունները, թուրքական բռնատիրության դեմ հատկապես քրիստոնյա հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի օգտագործումով՝ այդ կայսրության հաշվին քաղաքական-ռազմավարական ու տնտեսական առավելությունների հասնելու համար նրանց մրցապայքարը դիվանագիտության պատմության մեջ հայտնի է Արևելյան հարց անունով: Այդ տերմինը առաջին անգամ հանդիպում ենք Սրբազան դաշինքի 1822 թ. Վերոնայի կոնգրեսում թուրքական տիրապետության դեմ հույն ժողովրդի ազատագրական շարժման բռնկման, Բալկաններում ստեղծված իրավիճակը քննելու ժամանակ, երբ եվ-

րոպական դիվանագիտությունը քրիստոնյաներին փրկելու կարգախոսով կառչեց այդ հարցից՝ փլուզում թևակոխած Օսմանյան կայսրությունում արտոնյալ դիրքեր նվաճելու, նրա տրոհումից օգուտ շահելու համար: Արևելյան հարցի դիվանագիտական պատմության առաջին շրջանն ընդգրկում է մինչև 1853–1856 թթ. Արևելյան (Ղրիմի) պատերազմի սկիզբը: Այս ժամանակաշրջանում թուրքական ժառանգությանը տիրանալու մրցապայքարում գործուն մասնակցություն ունեին Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան և Ավստրիան: 1831-1833, այնուհետև 1839–1840 թվականներին Եգիպտոսի կառավարիչ Մուհամմեդ Ալիի հակաթուրքական ապստամբական շարժումների ժամանակ, երբ վերջինս սպառնում էր գրավել Կ. Պոլիսը և վերջ դնել թուրքական իշխանությանը, ասպարեզ ելան մեծ տերությունները: Ռուսական նավերը մտան Բոսֆոր՝ փրկելու սուլթանի գահը, 14 հազար ռուս զինվորներ ափ իջան Ունքյար-Իսքելեսիում և փակեցին եգիպտական բանակի ճանապարհը դեպի Կ.Պոլիս: Ռուս-թուրքական մերձեցումից անհանգստացած Անգլիան և Ֆրանսիան նպաստեցին Եգիպտոսի և Թուրքիայի հաշտեցմանը: Թուրքիայից ռուսական զորքերի դուրսբերման նախօրյակին կնքվեց Ունքյար-Իսքելեսի պայմանագիրը, համաձայն որի Ռուսաստանը պարտավորվում էր անհրաժեշտության դեպքում Թուրքիային ցուցաբերել ռազմական օգնություն: Պայմանագիրը նաև կապիտուլյացիոն արտոնություններ էր տրամադրում Ռուսաստանին: Պայմանագրի գաղտնի հոդվածի համաձայն, Թուրքիան պարտավորվում էր պատերազմի դեպքում Ռուսաստանի պահանջով փակել Դարդանելի նեղուցը օտարերկրյա բոլոր նավերի համար: Սա Արևելյան հարցում Ռուսաստանի հաջողության բարձրակետն էր: Վերոհիշյալ պայմանագիրն առաջ բերեց արևմտաեվրոպական տերությունների հետ Ռուսաստանի հարաբերությունների սրում:

1841 թ. տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի, Ավստրիայի, Պրուսիայի և Թուրքիայի Լոնդոնում գումարված խորհրդաժողովում ընդունված կոնվենցիայում ծովերի թագուհին ի չիք դարձրեց Ռուսաստանի կարճատև վերընթացը: Ռուսաստանը համաձայնեց չնորոգել պայմանագիրը և զրկվեց Թուրքիայում միակողմանի արտոնություններից: Այստեղ է, որ անգլիական դիվանագիտությունը մեջտեղ բերեց Օսմանյան կայսրության ամբողջականությունը հարգելու խնդիրը՝ status quo-*ն, որը պահպանելու պատրվակով տասնամյակներ շարունակ դառնալու էր դիվանագիտական գործառնություններում ամենաշատ կրկնվող արտահայտությունը՝ իր մեջ մարմնավորելով ճնշված ժողովուրդների (այդ թվում և արևմտահայության) ազատագրական պայքարն արգելակողի դերը:*

Status quo-*ն այսօրվա քաղաքագիտական լեզվով նշանակում է պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը: Բնութագրական է գերմանացի քաղաքագետ - միջազգայնագետ Ֆր. Էնգելսի այն դիպուկ խոսքը, թե* status

quo-*ի քաղաքականությունը սուլթանական իշխանության կողմից Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների ճնշման հավերժացումն է*[1]*:*

Այդպես եղավ նաև Ղրիմի պատերազմի արդյունքների դիվանագիտական ամփոփագրով՝ 1856 թ. մարտի 18-ի Փարիզի տրակտատով, որի համաձայն Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում Արևմտյան Հայաստանում գրաված բոլոր տարածքները (այդ թվում՝ Կարսը): Ղրիմի պատերազմը և Փարիզի հաշտության պայմանագիրը փոխեցին միջազգային իրադրությունը Եվրոպայում: Սրբազան դաշինքը փաստորեն դադարեց գոյություն ունենալուց, Ռուսաստանի դիրքերը թուլացան, առավել սրվեց Արևելյան հարցը: Չնայած 1870–1871 թթ. միջազգային իրադրության բարենպաստ պայմաններում Ռուսաստանը գրեթե վերականգնվեց Սև ծովում, բայց միևնույն է, Թուրքիայում թելադրողները եվրոպական տերություններն էին:

Ինչպես XIX դարի ռուս-թուրքական բոլոր պատերազմները, այնպես էլ 1877–1878 թթ. պատերազմը, հայ ժողովուրդը դիմավորեց գործուն խանդավառությամբ: Ռուսական զենքի հաղթանակի հետ մեծ հույսեր կապելով՝ արևելահայերը Անդրկովկասի նշանավոր քաղաքներում ու Երևանի նահանգի մի շարք վայրերում հրավիրում էին ժողովներ, Ռուսաստանի հայաբնակ շատ շրջաններում կազմակերպում ցույցեր՝ ժողովրդին կոչ անելով կամավորներ տալ ռուսական բանակին՝ թուրքական բռնակալության տակ գտնվող արևմտահայությանն ազատագրելու համար: Տակավին պատերազմն սկսվելուց ամիսներ առաջ, Անդրկովկասի տարբեր վայրերում կազմավորված կամավորական զորամիավորումները պատերազմի առաջին իսկ փուլում մտան մարտական գործողությունների մեջ: Կամավորական խմբերի ստեղծումը շարունակվեց նաև պատերազմի ընթացքում: Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողություններին մասնակցեցին մի քանի հազար հայ զինվոր, 7 հայազգի գեներալ և ավելի քան 500 սպա: Հազարավոր հայ կամավորներ զոհվեցին Կարսի, Էրզրումի, Բայազետի և այլ քաղաքների ու բնակավայրերի պաշարման և գրոհների ժամանակ: Հայ կամավորները մարտնչում էին Արևմտահայաստանի յուրաքանչյուր քաղաքի ու գյուղի համար, և նրանցից յուրաքանչյուրը երևակայում էր, թե հաղթանակի ու պարտության պատճառն իր զենքն է:

Մինչդեռ հայ զինվորների ու կամավորների հերոսամարտերը արտացոլումը չէին այն պայքարի ու նպատակի, որ նրանց գլխավերևում մղում էին ռուս կայսրն ու նրա գեներալները արևմտահայության ճակատագիրը որոշելու համար: Կամավորական շարժման ախոյաններն ու սպասավորները տակավին խորապես չէին գիտակցում, որ իրենք սոսկ նպաստում են ցարական ծավալապաշտական ռազմավարության ծրագրերի դյուրացմանը: Հետագա իրադարձությունների լույսի ներքո միայն հայ գործիչները կարողացան զանազանել ցարական խոստումների կեղծապատիր երանգները, ըմբռնել քրիստոնեասիրական կարգախոսների գործնական իմաստը:

---

[1] *Տե՛ս* К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. Т. 9. М., 1957, с. 31.

Հարկավ, իրողությունն այն է, որ ձգտելով առավել դյուրին իրականացնել իր արտաքին քաղաքականության ծավալապաշտական մտահղացումները, ռուսական դիվանագիտությունը, հավատարիմ իր փորձված ու արդարացված ավանդույթներին, շարունակեց օգտագործել Օսմանյան կայսրությանը ենթակա քրիստոնյաների, այդ թվում՝ հայերի շահերը պաշտպանելու պատրվակով Թուրքիայի ներքին գործերին միջամտելու հնարավորությունը:

Արևելյան հարցի երկրորդ շրջանն ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսը, երբ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման նպատակով Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան ձգտել են թուլացնել Ռուսաստանի դիրքերը Բալկաններում, Մերձավոր Արևելքում և ընդլայնել իրենց ազդեցության ոլորտը Թուրքիայում: Դրան նպաստել է Ռուսաստանի պարտությունը Ղրիմի պատերազմում: Չնայած 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակին՝ եվրոպական տերությունները խոչընդոտել են նրան օգտվելու այդ հաջողությունից: Պատերազմից հետո կնքված Սան Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի կոնգրեսի փաստաթղթերում, միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ Արևմտյան Հայաստանի հարցը շոշափվում է Հայկական հարց ձևակերպմամբ, որը, ըստ էության, դառնում է Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը: Արևելյան հարցի երկրորդ փուլում վերելք է ապրում Օսմանյան կայսրության լծի տակ գտնվող քրիստոնյա ազգությունների, այդ թվում՝ հայերի, ազգային-ազատագրական շարժումը: Բեռլինի կոնգրեսից (որը չարդարացրեց հայ ժողովրդի հույսերը) հետո հայ հասարակական-քաղաքական շրջանակներում հասունացավ Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ապստամբությամբ, զենքով ազատագրելու գաղափարը:

Հայերի շարունակվող ռուսական քաղաքական կողմնորոշումը (այլ գործոններ ևս) էլ ավելի ուժեղացրին հակահայ տրամադրություններն Օսմանյան կայսրությունում: Թուրք կառավարողների անհանդուրժողականությունը արևմտահայության նկատմամբ հատկապես սրվեց XIX դարի վերջին ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակից հետո, երբ արևելահայերը խնդրագիր ներկայացրին Կովկասի փոխարքային, իսկ արևմտահայերը՝ Կ.Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի գլխավորությամբ պաշտոնապես դիմեցին ռուսական հրամանատարությանը և արքունիքին՝ խնդրելով նրանց աջակցությունը արևմտահայության իրավունքների պաշտպանության հարցում Թուրքիայի հետ հաշտության պայմանները քննարկելիս: Օգտագործելով այդ դիմումները՝ Ռուսաստանը Սան Ստեֆանոյի պայմանագրի մեջ մտցրեց 16-րդ հոդվածը, որի համաձայն Թուրքիան պարտավորվում էր անհապաղ անհրաժեշտ բարենորոգումներ անցկացնել կայսրության հայաբնակ վայրերում՝ մինչև ռուսական զորքերի դուրսբերումը Թուրքիայից: Սակայն Հայկական լեռնաշխարհում ամուր ոտքերի վրա կանգնելու Ռուսաստանի այդ փորձը հանդիպեց Մերձավոր Արևելքում նրա մրցակցի՝ Մեծ Բրիտանիայի զորեղ դիմադրությանը, որը եվրոպական մյուս տերությունների հետ կարողացավ հրավիրել Բեռլինի կոնգրեսը, ուր վերանայվելու էր Սան Ստեֆանոյի պայմանագիրը, որով հնարավոր կլիներ զրկել Ռուսաստանին օգտվելու

Թուրքիայի դեմ հաղթանակի պտուղներից: Բեռլինի կոնգրեսում ռուսական դիվանագիտությունը հայտնվեց մեկուսացման մեջ և հարկադրված հրաժարվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի մի շարք կետերից՝ մասնավորապես համաձայնելով վերանայել 16-րդ հոդվածը, որը փոխարինվեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով, համաձայն որի թուրքական կառավարությունը պարտավորվում էր անհրաժեշտ բարենորոգումներ անցկացնել հայկական նահանգներում, սակայն դրանց իրականացման վերահսկողությունն արդեն հանձնվում էր ոչ թե միայն Ռուսաստանին, այլև Բեռլինի դաշնագիրը ստորագրած 6 տերություններին: Բեռլինի կոնգրեսում Անգլիան, շնորհիվ իր դիվանագիտական հաջողության, ոչ միայն տիրացավ Կիպրոսին, այլև Լլոյդ Ջորջի բնութագրմամբ, Արևմտյան Հայաստանը դարձրեց իր «պատվավոր հաշտության» սեղանի զոհը[2]:

Բեռլինի կոնգրեսի որոշումները խոր հիասթափություն առաջ բերեցին հայ քաղաքական շրջաններում, և նրանք, հույսները կտրելով Ռուսաստանից, սկսեցին կողմնորոշվել դեպի եվրոպական տերությունները, հատկապես՝ դեպի Անգլիան, որը, պաշտպանելով Թուրքիային ընդդեմ Ռուսաստանի, միաժամանակ որոշ ինքնավարության և ապահովության պատրանքներ էր ստեղծում հայերի մոտ: Սակայն հասնելով իր քաղաքական և ռազմավարական դիրքերի ամրապնդմանը Արևելյան Միջերկրականում ու Թուրքիայում ու սասանելով հայերի հավատը Ռուսաստանի նկատմամբ՝ Անգլիան լքեց արևմտահայությանը՝ նրան մատնելով թուրքական կառավարության կամայականություններին: Վերջինս էլ ճիշտ գնահատեց այն դերը, որ հայերը այսուհետև կարող են խաղալ մեծ տերությունների բարդ փոխհարաբերություններում, որդեգրեց՝ Հայկական հարցին վերջ տալու համար անհրաժեշտ է վերջ տալ հայերին, թուրքական բարբարոսության նոր կարգախոսը: Աբդուլ Համիդ II-ը ձեռնամուխ եղավ հայերի զանգվածային ջարդերին, ինչը նշանակում էր ցեղասպանության քաղաքականության մեկնարկ: Արևմտահայերի աբդուլհամիդյան արյունահեղությունը տեղի էր ունենում եվրոպական տերությունների, այդ թվում նաև Ռուսաստանի, անտարբեր հայացքի առջև: Բայց այդ երկրների հասարակայնության ճնշման տակ «հայերի խնամակալ» Մեծ Բրիտանիան մշակեց և սուլթանին ներկայացրեց Թուրքիայի հայաբնակ վայրերում բարենորոգումների մի ծրագիր (մայիսյան բարենորոգումներ), որը, ըստ էության, նպատակ ուներ սահմանափակել Ռուսաստանի միակողմանի միջամտությունը Հայկական հարցին:

Միևնույն ժամանակ չենք կարող շրջանցել այն իրողությունը, որ 1880-ական թվականներից Ռուսաստանն արդեն որդեգրել էր Անդրկովկասում ռուսականացման քաղաքականությունը և բացահայտորեն դեմ էր այնպիսի տարածքի կազմավորմանը, որտեղ հայերը կօգտվեին բացառիկ առավելություններից: Բացի այդ, ձախողվելով Բուլղարիայի հարցում, որը թեև ազատագրվել էր ռուսական զենքի օգնությամբ, բայց չէր ուզում դառնալ նրա վասալը, ցարա-

---

[2] *Տե՛ս* Л л о й д Д ж о р д ж. Правда о мирных договорах. Т. 2. М., 1957, с. 390.

կան դիվանագիտությունն իր արտաքին գործերի 1895–1896 թթ. նախարար Ալեքսեյ Լոբանով-Ռոստովսկու բերանով հայտարարում էր, թե ինքը թույլ չի տա մի «նոր Բուլղարիայի» (նկատի ունենալով Հայաստանը) ստեղծում: Ի դեպ, նշենք, որ, ի տարբերություն Ալեքսանդր Գորչակովի, Լոբանով-Ռոստովսկին մոտ հարաբերություններ էր հաստատել Բարձր Դռան հետ և վարում էր Թուրքիային սիրաշահելու քաղաքականություն, որը և արձակում է Աբդուլ Համիդի ձեռքերը արևմտահայերի կոտորածների ժամանակ: 1880-ական թվականների սկզբից Ռուսաստանում ծայր առած հետադիմությունն իրեն զգալ տվեց նաև այլազգիների, հատկապես հայերի նկատմամբ ցարական վարչակազմի քաղաքականությունում, ուժեղացավ ազգային ճնշումը հայերի նկատմամբ ամենուրեք: 1885 թ. սկզբին փակվեց մոտ 300 դպրոց, իսկ չփակվածներում արգելվեց Հայաստանի պատմության ու աշխարհագրության դասավանդումը, քանզի այդ առարկաները իբր հայկական պետության վերականգնման ցնորային հույսեր էին առաջացնում: 1896 թ. հունվարին կառավարության կարգադրությամբ փակվեց ևս 230 դպրոց: 1898 թ. մարտի 17-ին նախարարների կոմիտեն հատուկ որոշում կայացրեց հայկական դպրոցներին պատկանող գույքը պետական իշխանությունների տնօրինությանը հանձնելու մասին: 1900 թ. փակվեց Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը: Խիստ ուժեղացվեց գրաքննությունը: Հայկական բարեգործական ընկերություններին առաջարկվեց պարտադիր փոխել իրենց լուսավորական բնույթը և ներքին գործերի նախարարի հաստատած նոր կանոնադրություններով զբաղվել միայն տեղական աղքատախնամ գործերով: Հայկական փակված դպրոցների փոխարեն բացվելիք պետական նոր դպրոցները նյութապես ապահովելու, հայերին մշակութային չնչին իսկ ինքնավարություններից զրկելու նպատակով Կովկասի կառավարապետ իշխան Գոլիցինը պահանջեց բռնագրավել հայ եկեղեցու գույքը: Նիկոլայ II-ը 1903 թ. հունիսի 12-ին ստորագրեց հայկական եկեղեցու ունեցվածքի և կապիտալի բռնագրավման օրենքը, որն ամբողջությամբ ուղղված էր հայ ժողովրդի ու նրա մշակույթի դեմ: Հայ ժողովուրդն այդպես էլ գնահատեց այն և ոտքի ելավ պաշտպանելու իր իրավունքները:

Ցարական կառավարության հակահայկական քաղաքականությունը հայ հասարակական-քաղաքական կարճամիտ շրջաններին մղեց հենարան որոնել երիտթուրքական վերնախավային հեղափոխական շարժման մեջ, որի նախաձեռնությամբ 1907 թ. Փարիզում տեղի ունեցավ հակասուլթանական ընդդիմադիր ուժերի համագումարը, որը մշակեց Օսմանյան կայսրությունում պետական հեղաշրջում կատարելու ծրագիր: Երիտթուրքական 1908 թ. պետական հեղաշրջումից հետո Հայկական հարցը թևակոխեց գործընթացի նոր փուլ, երբ արևմտահայության անհեռատես քաղաքական շրջաններն իրենց ակնկալությունների իրականացումը կապեցին թուրքական պետականության բարեփոխումների հետ: Սակայն հիասթափությունը չհապաղեց: 1909 թ. Ադանայի իրադարձություններից հետո հայ քաղաքական շրջանները աստիճանաբար փոխեցին իրենց դիրքորոշումը և վերստին կողմնորոշվեցին դեպի Ռուսաստան,

որը հասունացող համաշխարհային պատերազմի նախօրեին արդեն շահագրգռված էր հայերի համակրանքը շահելու մեջ:

Կադետական կուսակցության պարագլուխ Պավել Միլյուկովի արտահայտությամբ՝ «Ռուսաստանի և Թուրքիայի խաչմերուկում նստած հայերը» քաղաքական մեծ նշանակություն էին ստանում, և սկսված Բալկանյան 1912–1913 թթ. պատերազմներում ռուսական դիվանագիտությունը ստանձնում էր «ճնշված հայերի» պաշտպանի դերը[3]: Շուրջ երկու տարի տևած դիվանագիտական լարախաղացությունից հետո, որին մասնակցում էին եվրոպական վեց տերությունների՝ Կ. Պոլսի դեսպանները, Ռուսաստանին հաջողվեց Թուրքիային պարտադրել բարենորոգումների մի նոր ծրագիր՝ Հայկական բարենորոգումներ. 1914 թ. հունվարի 26-ը, որով արևմտահայությունը պետք է ստանար լայն ինքնավարություն տերությունների, և ամենից առաջ, Ռուսաստանի վերահսկողության ներքո: Այդ ծրագիրը սկսված համաշխարհային պատերազմի պատճառով ոչ միայն մնաց թղթի վրա, այլև հող նախապատրաստեց Ռուսաստանի «հայապաշտպան» դիրքորոշումից զազազած երիտթուրքական կառավարության համար՝ իրագործելու հայոց ցեղասպանության վաղուց որդեգրած գաղափարը:

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիան հանդես եկավ Գերմանիային դաշնակից, իսկ դա նշանակում էր, որ Հայկական հարցում սկսվում էր Ռուսաստանի համար նոր փուլ: Ռուսաստանի համար առաջնահերթային ճակատը Արևմտյանն էր: Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում սկսվեցին 1914 թ. դեկտեմբերին՝ թուրքական զորքերի հարձակմամբ Կարսի ուղղությամբ: Շուտով ռուսական զորքերը կասեցրին հարձակումը և անցան հակահարձակման ու 1915–1916 թթ. ընթացքում մի շարք հաջող գործողություններից հետո, 1917 թ. դուրս եկան Մոսուլի և Սեբաստիայի մերձակայքը: Գրավեցին Արևմտյան Հայաստանի մեծ մասը, որտեղ գրեթե հայ չէր մնացել: Չպետք է անտեսել, որ ռուսական զորքերի գործողությունների հապաղումը հայտնի չափով նպաստել էր հայոց ցեղասպանության իրագործմանը: Արևելահայ հասարակական-քաղաքական որոշ շրջաններ ռուսական զենքի հաջողությունների հետ կապում էին ռոմանտիկ հույսեր, այն է՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը և հայկական պետականության վերստեղծումը: Անկախ Հայաստան ստեղծելը երբեք չէր մտել ցարիզմի ծրագրի մեջ: Արևմտյան Հայաստանի գրաված տարածքում ցարական կառավարությունն անհրաժեշտ համարեց հաստատել միասնական ռազմավարչական իշխանություն: Սկզբում ստեղծվեցին ռազմավարչական մի քանի միավորներ՝ օկրուգներ, որոնց պետերը ենթարկվում էին տվյալ օկրուգի տարածքում տեղակայված Կովկասյան բանակի զորամասերի հրամանատարներին: Ցարական կառավարությունը 1916 թ. սկզբին կազմավորեց հատուկ հանձնաժողով, որը պետք է մշակեր կանոնադրություն՝ ստեղծելու պատերազմի ընթացքում գրաված Թուրքիայի մարզերի գեներալ-նահանգապետություն (Թուրքահայաստա-

[3] *Տե՛ս* П. Н. М и л ю к о в. Воспоминания. М., 1991, с. 365.

նի գեներալ-նահանգապետություն): Այն իրողությունը, որ նահանգապետության անվանման մեջ անգամ չէր հիշատակված Արևմտյան Հայաստանը, ինքնին վկայում էր, որ ցարական վարչակարգը բնավ էլ միտք չուներ հայկական որևէ ինքնավարություն ստեղծելու մասին, և պատերազմի ավարտից հետո, եթե այն մնար Ռուսաստանին, ապա գեներալ-նահանգապետությունը կարող էր դառնալ սովորական մի նահանգ Ռուսաստանի կազմում (ինչպես Երևանի, Թիֆլիսի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Շամախու, Դերբենդի նահանգները): Արևմտյան Հայաստանի վերաբերյալ ցարիզմի իսկական մտադրությունները շատ ավելի բացահայտ գաղութատիրական եղան: Ցարական վարչակարգը չէր էլ ձգտում պայմաններ ստեղծել, որպեսզի արևմտահայերը վերադառնան իրենց բնակավայրերը, ընդհակառակը՝ ծրագրում էին Արևմտյան Հայաստանը բնակեցնել ռուս վերաբնակիչներով: Այս նոր նախաձեռնությունը պատկանում էր կայսրության երկրագործության նախարար Ալեքսանդր Կրիվոշեինին, իսկ Կովկասյան բանակի հրամանատար Նիկոլայ Յոդենիչը անհրաժեշտ էր համարում Ռուսաստանին սահմանամերձ բնակավայրերը՝ Դիադինը, Բայազետը և Ալաշկերտը բնակեցնել Դոնից ու Կուբանից բերված կազակներով և ստեղծել, այսպես կոչված, «Նորեփրատյան կազակություն», որպես Ռուսական կայսրության հուսալի հենարան: Այդ ծրագրերն իրագործել, սակայն, նրանց չհաջողվեց, քանզի մինչ աշխատանք էր տարվում Ռուսաստանից մարդկանց բերել Արևմտյան Հայաստան, այստեղ արդեն սկսվել էին վերակառուցման աշխատանքները, անհրաժեշտ էր հողը մշակել, ուստի իշխանությունները հարկադրված թույլ տվեցին հայ գաղթականներին վերադառնալ իրենց օջախները: Հայրենիք վերադարձածները, ցավոք, չկարողացան ստանալ իրենց նախկին հողերը, քանի որ դրանք հայտարարվել էին պետական սեփականություն. նրանք իրավունք ստացան միայն իրենց հողերից օգտվել ծանր կապալով:

Ցարական վարչակարգը պատերազմի տարիներին որոշակի քայլերի դիմեց տնտեսապես յուրացնելու նորանվաճ Արևմտյան Հայաստանը. կառուցվեցին նոր ճանապարհներ, սկսվեցին Տրապիզոնի և Ռիզեի նավահանգիստների վերակառուցումը, նոր երկաթգծերի շինարարությունը: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը, սակայն, խափանեց Արևմտյան Հայաստանի գաղութացման ցարիզմի կանխատեսումները:

Հայկական հարցի լուծման ուղղությամբ ոչինչ չարեց Ռուսաստանի Հանրապետության ժամանակավոր կառավարությունը: Ինչո՞ւ, չկարողացա՞վ, թե՞ չէր ուզում: Այս տեսակետից ուշագրավ են տակավին Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին Պավել Միլյուկովի ճառերն ու հոդվածները: Դրանցում վերջինիս դիրքորոշումը թելադրված էր իշխանության ձգտող կադետական կուսակցության արտաքին քաղաքականության հայեցակարգով, որը միտված էր Ռուսաստանի համար առավելագույն օգուտ ապահովելով, տնտեսական և քաղաքական թելադրող դիրքեր նվաճելով, Ռուսաստանի միջազգային հեղինակությունը բարձրացնելով, ինչպես նաև պատերազմի անբարենպաստ ելքի դեպքում՝ թույլ չտալ հեղափոխության նոր իրադրության ստեղծում: «Ինչպիսին էլ լինի վերաբերմունքը կառավարության

ներքին քաղաքականության նկատմամբ,– ասված է Միլյուկովի գործուն մասնակցությամբ կազմված կադետական կուսակցության կենտկոմի 1914 թ. հուլիսի 21-ի հայտարարության մեջ,– մեր անմիջական պարտքն է պահել հայրենիքը միասնական ու անբաժանելի, և դրա համար պահպանել համաշխարհային տերությունների շարքում գրված այն դիրքը, որ այսօր մեզանում վիճարկվում է թշնամիների կողմից: Մի կողմ թողնենք ներքին վեճերը, նվազագույն առիթ իսկ չտանք մեզ՝ տարաձայնությունների բաժանման նրանց հույսերին»[4]: Պետդումայի մեկօրյա արտակարգ նիստում, 1914 թ. հուլիսի 26-ին, Միլյուկովը հանդես եկավ կառավարության հետ «սրբազան միասնության» հայտարարությամբ, որի բովանդակությունը պատերազմի ժամանակաշրջանում ընդդիմությունից հրաժարվելու, ժամանակավորապես արդիականության շատ հարցեր մի կողմ թողնելու, մեկ ընդհանուր հունի մեջ հայրենասիրական միասնական ջանքերը միավորելուն ուղղված մի յուրահատուկ կոչ էր: Առաջին համաշխարհային պատերազմը Միլյուկովի համար գերմանական նվաճողականության դեմ պատերազմ լինելուց զատ՝ Բալկաններում Ռուսաստանի հզորացման և սնծովյան նեղուցները վերջինիս միացման պատերազմ էր: 1916 թ. պառլամենտական պատվիրակության կազմում Անգլիայում եղած ժամանակ Ֆորին օֆիսի ղեկավար Էդ. Գրեյին Միլյուկովն ասել է. «Նեղուցները մեր դաշինքի գինն են»: Էդ. Գրեյի հետ զրույցի ժամանակ Միլյուկովը ժխտում էր Ռուսաստանում բնակվող ժողովուրդների տարածքային ու քաղաքական ինքնորոշման իրավունքը: Այսպես, ռուսական ազդեցությունից լեհերի անկախության պահանջի առնչությամբ Միլյուկովն ասում է. «Մենք դեմ ենք միջազգային ակտում Լեհաստանի ներքին սահմանադրության վերաբերյալ հիշատակության: Ամենաշատը՝ նրա տարածքային սահմանի հիշատակության»[5]:

Հայկական հարցում Պ. Միլյուկովը իր կարծիքը շատ ավելի հստակ արտահայտեց 1916 թ. Ջ. Բրայսի (Դերկոմս, անգլիական պետական գործիչ, դիվանագետ, իրավաբան) և Նոել Բաքստոնի (անգլիական պառլամենտի անդամ, հասարակական-քաղաքական գործիչ) հետ զրույցի ժամանակ: «Բազում մասնավոր հանդիպումներից, ծանոթություններից, նախաճաշերից ու ճաշերից,– հետագայում գրել է Միլյուկովը,– հիշատակեմ միայն մի քանիսի մասին: Բրայսը և Նոել Բաքստոնը ինձ համար ճաշկերույթ էին կազմակերպել, որի ժամանակ գլխավոր թեման Հայկական հարցն էր. երկուսն էլ Հայաստանի պաշտպաններ էին: Ինքս էլ լինելով այդպիսին, սակայն, Ռուսաստանի գերիշխանության ներքո մեծ Հայաստանի ինքնավարությունը հակադրում էի տերությունների հովանավորության ներքո Հայաստանի անկախության նրանց ծրագրին: Ապագա Հայաստանի տարածքի մասին հարցում ես հերքեցի, որ մենք դեպի Մոսուլ ենք գնում, և մեր ձգտումը սահմանափակեցի Դիարբեքիրով, այսինքն՝ լեռների և հարթավայրի սահմանով, դուրս թողնելով Փոքր Հայքը (Կիլիկիան) և Ալեքսանդրետը»[6]:

---

[4] “Русские ведомости”, 22 июля 1914 г.

[5] П. Н. М и л ю к о в. Воспоминания. Т. 2. Нью-Йорк, 1955, с. 185.

[6] П. Н. М и л ю к о в. Воспоминания. М., 1991, с. 424.

Հայկական հարցի վերաբերյալ Պ. Միլյուկովի տեսակետի կարևորման մեր նպատակն էր ցույց տալ, որ ռուսական լիբերալ բուրժուազիայի քաղաքական ուղեգիծը հիմնականում չէր շեղվում ցարական վարչակարգի որդեգրած քաղաքականության ընթացքից: Ժամանակավոր կառավարությունը հավատարիմ մնաց պատերազմը մինչև հաղթական ավարտ հասցնելու ցարիզմի քաղաքականությանը, որը պաշտպանվեց հայ բուրժուական գրեթե բոլոր հոսանքների կողմից: Ի դեպ, ցարիզմի տապալումից հետո էլ Արևմտյան Հայաստանում պահպանվում էր պատերազմի իրավունքով գրավված տարածքների գեներալ-նահանգապետությունը: Միայն 1917 թ. ապրիլի 26-ին Ժամանակավոր կառավարությունը հրապարակեց վարչական կառավարման փոփոխման նոր որոշում, համաձայն որի Թուրքիայից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքի քաղաքացիական կառավարումն անմիջականորեն դրվում էր կենտրոնական կառավարության տնօրինության տակ: Ժամանակավոր կառավարության որոշմամբ ստեղծվեց Թուրքիայից գրավված տարածքների գեներալ-կոմիսարի պաշտոն, որն զբաղեցնում է Կովկասյան ճակատի մատակարարման պետ Պ. Ավերյանովը: Վերջինիս հրամանով սեպտեմբերի 9-ին Արևմտյան Հայաստանի տարածքում ձևավորվեցին Էրզրումի, Խնուսի և Վանի նահանգները, որոնց ղեկավարում էին կոմիսարները: Յուրաքանչյուր նահանգում կոմիսարին կից ստեղծվում են նահանգային խորհուրդներ, որոնց կազմում զգալի թիվ էին կազմում հայերը: Ընդհանրապես նահանգներում քաղաքացիական գործերի ողջ ղեկավարությունն անցնում է հայերի ձեռքը:

Նորաստեղծ նահանգներում վարչական կառույցների գործունեությունը հույս էր ներշնչում, որ թուրքական ջարդերից փրկված հայ գաղթականները կարճ ժամանակաշրջանում կվերադառնան հայրենի երկիր: Վերաբնակեցման գործը ավելի արագ առաջ մղելու համար կոմիսար Ավերյանովի քաղաքացիական գծով տեղակալ, բժիշկ Հ. Զավրյանը (Զավրին) կարողացավ հասնել նրան, որ կառավարությունն արագացրեց գրավված Արևմտահայաստանը կովկասյան իշխանությունների տնօրինությունից վերցնելու և Ժամանակավոր կառավարության անմիջական հսկողության տակ դնելու իր իսկ որոշման կենսագործումը: Արևմտյան Հայաստանը աստիճանաբար վերաբնակեցվում էր, երկիրը, թեև դանդաղորեն, հարություն էր առնում մոխիրներից, բայց մարդավայել ապրելու համար հարկավոր էր վերաշինել այն: Ժամանակավոր կառավարությունը, սակայն, դրա հնարավորությունն ու ցանկությունը չուներ: Դրա համար էլ, չնայած կատարվող միջոցառումներին ու հայ գործիչների ջանքերին, Արևմտյան Հայաստանում չստեղծվեց քաղաքացիական կայուն կարգ, իսկ այդ ուղղությամբ կառավարության դանդաղկոտությունը հուշում էր, որ Արևմտյան Հայաստանը հետփետրվարյան վարչակարգին ևս հետաքրքրում էր ամենից առաջ տնտեսական տեսակետից ու երկրատարածքը Ռուսաստանի հանրապետությանը միակցելու նվաճողական նկատառումներով[7]:

---

[7] *Տե՛ս Վ. Մ ե լ ի ք յ ա ն. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997, էջ 154:*

Ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանը դիտում էր որպես գրաված տարածք, որը Ռուսահայաստանի հետ պետք է մտներ ֆեդերալ կառուցվածք որդեգրող Ռուսաստանի հանրապետության կազմի մեջ՝ ներքին լայն ինքնավարությամբ: Այս տեսակետը մասնավորապես պաշտպանում էին կադետների պարագլուխ Միլյուկովը և Ժամանակավոր կառավարության այլ անդամներ (Մ. Սկոբելև և ուրիշներ): Պ. Միլյուկովը, ինչպես պատերազմից առաջ և պատերազմի ընթացքում բազմիցս հայտարարել էր, որ հայերի համար լավագույն լուծումը ռուսական պետության կազմի մեջ հայության բոլոր հատվածների միացումն է՝ ներքին ինքնավարությամբ: Արևմտյան Հայաստանի լիակատար անկախության գաղափարն ընդհանրապես Ժամանակավոր կառավարության կազմում չուներ կողմնակիցներ: Հարցի նկատմամբ հայ հասարակական-քաղաքական ուժերի դիրքորոշումները տարաբնույթ էին, միայն սոցիալիստ-հեղափոխականներն էին պաշտպանում Ժամանակավոր կառավարության մոտեցումները:

Ահա այսպիսին էր Հայկական հարցի «լուծման» ընթացքը, երբ երկրում հասունանում էր քաղաքական ճգնաժամը, երբ բոլշևիկների հակապատերազմական կարգախոսների և այլևայլ գործողությունների ազդեցության ներքո կործանվում էր Ռուսաստանի Հանրապետությունը, և մարմին էր առնում մարդկությանն անծանոթ պետական մի նոր կարգ՝ խորհրդային իշխանությունը, մի իշխանություն, որի վարած արտաքին ու ներքին գաղափարականացված քաղաքական ռազմավարությունն ու մարտավարությունը Հայկական հարցի լուծման ընթացքը տարան անծանոթ մի ուղիով, որին չկարողացավ հասու լինել և ի շահ ազգի օգտագործել ինչպես բուրժուական, այնպես էլ բոլշևիկյան հայ քաղաքական միտքն ու դիվանագիտությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունը Հայկական հարցը «հանեց» հին փակուղուց և Խորհրդային Ռուսաստանի կառավարության 1917 թ. դեկտեմբերի 29-ի դեկրետով մտցրեց մի նոր փակուղի[8]*: Ուշագրավ է, որ դեկրետի նախագիծ կազմելու համար ստեղծվել էր հանձնաժողով, որի մեջ մտել էին Ի. Ստալինը, ձախ էսեռ Պ. Պռոշյանը և մենշևիկ Պ. Աքսելրոդը: Հետագայում վերջինիս փոխարեն հանձնաժողովի մեջ մտավ դաշնակցական Ստ. Զորյանը (Ռոստոմ): Հանձնաժողովի աշխատանքներին աջակցում էին Հայկական գործերի կոմիսարիատի գործիչներ Վ. Ավանեսովը, Վ. Տերյանը, Ս. Լուկաշինը և ուրիշներ: Հանձնաժողովը կազմեց զեկուցագիր («*Докладная записка о Турецкой Армении*»), որի համաձայն Արևմտյան Հայաստանը պետք է դառնար անկախ պետություն, իսկ Արևելյան Հայաստանը մնար Ռուսաստանի կազմում՝ ներքին ինքնավարության կարգավիճակով: Զեկուցագրի հետ Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի քննարկմանը ներկայացվեց նաև «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագիծը: Ե՛վ զեկուցագրում, և՛ դեկրետի նախագծում կազմողները Արևմտյան Հայաստանում հայկական պետության ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ այլևայլ միջոցառումների իրագործման հետ միասին շատ կարևորում էին, որ*

---

[8] *Տե՛ս Ն. Սարուխանյան. Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997, էջ 155:*

հայկական պետությունը կարող է ստեղծվել և գոյատևել միայն այն դեպքում, եթե անհրաժեշտ քանակությամբ ռուսական զորքեր թողնվեին Արևմտյան Հայաստանում (Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նախկին սահմաններում) այնքան ժամանակ, մինչև որ արևմտահայությունը հնարավորություն կստանա ազատ համաժողովրդական քվեարկությամբ վճռել անկախ Հայաստանի ներքին կարգի հարցը, մինչև որ կկազմակերպվի հայ ժողովրդական միլիցիա՝ երկրի ներքին և արտաքին անվտանգությունն ապահովելու համար: Դեկրետի նախագիծը ՌԽՖՍՀ ժողկոմխորհում քննարկվել է երեք անգամ՝ դեկտեմբերի 20-ին, 23-ին և 29-ին: Առաջին երկու քննարկումներում Ի. Ստալինի և Պ. Պոռշյանի միջև առաջացած տարաձայնությունների պատճառով որոշում չի ընդունվել: Ժողկոմխորհը դեկտեմբերի 29-ին որոշ փոփոխություններով ընդունել է դեկրետը, որը դեկրետի նախագծի միջոցառումների իրականացման միակ հիմնական երաշխիքը ձևակերպել է այսպես. «Զորքերի դուրսբերումը «Թուրքահայաստանից» և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական և գույքային անվտանգությունը պահպանելու նպատակով»[9]:

Դեկրետում չնշվեց նաև Թուրքահայաստանի պետության սահմանները: Հատկանշական է, որ դեկրետի իրականացման պարտականությունը դրվեց Կովկասի գործերի արտակարգ ժողովրդական կոմիսար Ստ. Շահումյանի վրա, որին սակայն այդ նպատակի համար չտրվեցին արտակարգ լիազորություններ՝ ոչ զինված ուժեր և ոչ էլ ֆինանսներ: Ավելին, ինչ-որ տեղ տարօրինակ էր, որ դեկրետի իրականացման պարտականությունը դրվեց մի մարդու վրա, որը [ինչպես Վ. Տերյանը, Ալ. Ջիվելեգովը, Ռոստոմը (Ստ. Զորյանը), Պ. Պոռշյանը] դեմ էր Արևմտահայաստանից ռուսական զորքերի դուրսբերմանը: Ստ. Շահումյանը, դեկրետի ընդունումից ինն օր առաջ, «Բակինսկի ռաբոչի» թերթի դեկտեմբերի 20-ի համարում լույս տեսած «Կովկասյան բանակի ետ քաշվելու առթիվ» հոդվածում գրում էր, որ հարկավոր է ազատված տարածքներում պահպանել որևէ պաշտպան զորամաս, որ «Ռուսական զորքերի անակնկալ ետ քաշելը չափազանց ծանր դրություն է ստեղծում Թուրքահայաստանում: Մենք գիտենք այս անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին… Ռուսական զորքերի ետ քաշվելու լուրը առաջ կբերի հարազատ վայրերից փախած, մի կողմից՝ թուրքերի և քրդերի, մյուս կողմից՝ հայերի շարժում: Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք, որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անմեղ խաղաղ բնակչության արյան նոր գետեր են հոսելու»[10]: Եղավ ճիշտ այնպես, ինչպես կանխատեսում էր Շահումյանը:

«Թուրքահայաստանի մասին» դեկրետի հրապարակումից հետո, ռուսական զորքերը աստիճանաբար դուրս եկան ոչ միայն գրաված տարածքներից, այլև

---

[9] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 418:*

[10] *Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն. Երկեր, հ. 3, Երևան, 1958, էջ 28:*

Անդրկովկասից: Ստեղծված բարենպաստ դրությունն օգտագործելով, թուրքական զորքերը 1918 թ. փետրվարի 10-ին ներխուժեցին Անդրկովկաս՝ հիմնականում Արևելյան Հայաստանը գավթելու նպատակով: Այս իրողությունն առավել ևս «Թուրքահայաստանի մասին» դեկրետը գործնականում դարձրեց դիվանագիտական խաբկանք: Թուրքերը վերանվաճեցին Երզնկան, Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը: Իր արդյունքներով հակահայկական էր նաև Բրեստ-Լիտովսկի 1918 թ. մարտի 3-ի հաշտությունը, որով Խորհրդային Ռուսաստանն ընդունեց Քառյակ դաշինքի բոլոր պահանջները: Բրեստի հաշտության 4-րդ - հոդվածով Թուրքիային էին հանձնվում Արևմտյան Հայաստանը և Կարսի ու Արդահանի մարզերը: Եվ միայն Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից (հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարից) հետո թուրքական զորքերը թողեցին Հայաստանի Հանրապետության տարածքը և Կարսի մարզը. վերականգնվեց 1914 թ. ռուս-թուրքական սահմանը: Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության հետագա ընթացքը շատ ավելի հակահայկական էր:

Այդ քաղաքականության հակահայկական ուղղվածությունը բացահայտում են 1918–1920 թթ. տեղի ունեցած իրադարձությունները: Օսմանյան կայսրությունը 1918 թ. վերջին լինել-չլինելու պատմական պահ էր ապրում: Հաղթանակած Անտանտի պետությունները ծրագրել էին մասնատել, բաժան-բաժան անել Թուրքիան: Գրեթե այդպես էլ եղավ: Օսմանյան հոգեվարք ապրող կայսրությունից անջատվեցին արաբական երկրները, Հունաստանը տեր էր դառնում իր պատմական տարածքների մի մասին: Հերթի էր դրված նաև Արևմտյան Հայաստանի ազատագրման և Արևելյան Հայաստանում գոյություն ունեցող անկախ Հայաստանի Հանրապետության հետ միավորվելու ու միացյալ Հայաստան ստեղծելու արդեն իսկ այդ ժամանակ ռոմանտիկ թվացող ծրագիրը: Հետագա իրադարձություններն այնպես զարգացան, որ թուրքական ճիրաններից Արևմտյան Հայաստանը չազատագրվեց: Թուրք նացիոնալիստներին հաջողվեց 1919 թ. արևմտյան տերությունների ծրագրերի դեմ երկրում ստեղծել ազատագրական շարժում և կանգնել շարժման գլուխ: «Ազգային-ազատագրական» հորջորջված այդ շարժումը նպատակ ուներ թուրքական նոր ստեղծվելիք պետության մեջ պահպանել, ինչքան հնարավոր է, շատ տարածքներ: Շարժման առաջնորդ դարձավ նախկին երիտթուրք, ռազմական հայտնի գործիչ Մուստաֆա Քեմալը, որը կարճ ժամանակ անց մեծարվեց Աթաթուրք անունով (թուրքերի հայր), իսկ շարժումը հորջորջվեց՝ քեմալական:

Քեմալական շարժումը մեկնարկեց մի պահի, երբ Կ. Պոլսում և այլուր Անտանտի զորքերն էին: Շարժման մեկնարկին անմիջական առիթ դարձավ հունական զորքերի կողմից 1919 թ. մայիսին Իզմիրի (Զմյուռնիա) գրավումը, որից հետո շարժումը ծավալվեց և ընդգրկեց Անատոլիայի մեծ մասը: Քեմալական շարժումը ժառանգեց երիտթուրքերի նվաճողական քաղաքականության գաղափարական ծրագիրը՝ շովինիզմը և արկածախնդրությունը: Ավելին, թուրք ազգը առանձնացնելով որպես բազմազգ պետության էլիտա՝ Մուստաֆա Քե-

մալը հայտարարում է, որ «թուրքն օժտված է մեծ ու բարձր հատկանիշներով»[11]:

Այս ամենը չխանգարեց, որպեսզի «համաշխարհային հեղափոխության հաղթանակի» կարգախոսով առաջնորդվող Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարությունը պաշտպան կանգնի քեմալական շարժմանը՝ այն համարելով իմպերիալիզմի դեմ Արևելքի ճնշված ժողովուրդների պայքարի դրոշակակիր: 1920 թ. ապրիլի 26-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը Մուստաֆա Քեմալի ստորագրությամբ նամակ-դիմում ուղարկեց Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին, ուր ցանկություն էր հայտնվում երկու երկրների միջև մշտական հարաբերություններ հաստատել և համատեղ պայքար մղել իմպերիալիստների դեմ: Տեսնելով Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության «բարի կամքի» դրսևորումը, 1920 թ. հունիսին մեկ այլ նամակում Մուստաֆա Քեմալը գրում էր. «Եթե խորհրդային ուժերը մտադիր են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ... և ձեռնարկել անգլիացիների արտաքսումը Կովկասի տարածքից, թուրքական կառավարությունն իր վրա է վերցնում ռազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ...»[12]: Չնայած Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարությունը Հայաստանի Հանրապետությանը պաշտպանության տակ առնելու հավաստիացումներ էր անում, սակայն չէր ընդդիմանում Մուստաֆա Քեմալի նվաճողական ծրագրերին: Ավելին, նա պատրաստակամություն էր հայտնում «հեղափոխական Թուրքիայի» առաջնորդին ցույց տալու ռազմական և այլ կարգի օգնություն: Հայաստանի Հանրապետության դեմ ռազմատենչ հայտարարություններով հանդես էին գալիս օրեր առաջ խորհրդայնացված Ադրբեջանի ղեկավարները:

Արդի պատմագիտության դիրքերի վրա կանգնած ոչ մի էմպիրիկ կամ տեսաբան չի կարող երկմտել, որ Խորհրդային Ռուսաստանի հատկապես արևելյան քաղաքականության հիմքերը պետք է փնտրել «համաշխարհային հեղափոխության հաղթանակի» ապահովման տխրահռչակ տեսության մեջ, թեկուզ այն տեղի ունենար մի ամբողջ ժողովրդի, տվյալ դեպքում հայ ժողովրդի, կենսական շահերի ոտնահարման, նրա հայրենիքի առուծախի գնով: Ոգեշնչված Արևելքի ժողովուրդների 1920 թ. սեպտեմբերի սկզբին Բաքվում տեղի ունեցած համագումարի ամբիոնից հայ ժողովրդի հասցեին հնչած սպառնալիքներից և «իմպերիալիստական Հայաստանը ոչնչացնելու» կոչերից, համոզված նաև, որ Հայաստանի Հանրապետությունը մեն-մենակ է քեմալականների դիմաց, Խորհրդային Ռուսաստանից մեծաքանակ զենք ու դրամ ստացած «Նոր Թուրքիան» 1920 թ. սեպտեմբերի վերջերին պատերազմ սկսեց Հայաստանի Հանրապետության դեմ:

Թուրքական և բոլշևիկյան հակահայկական քարոզչության պատճառով քայքայված, կազմալուծված, դասալքությամբ բարոյալքված Հայաստանի Հանրապետության բանակը պարտվում է: 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքվում է Ա-

[11] М. К е м а л ь. Путь Новой Турции. Т. I. М., 1932, с. 15.

[12] Архив внешней политики России, ф. 132, оп. 3, п. 2, д. 1, л. 11.

լեքսանդրապոլի պայմանագիրը Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև, որը իրավական ոչ մի հիմք չուներ, քանի որ արդեն նոյեմբերի 29-ին հանրապետությունում հռչակվել էր խորհրդային իշխանություն: Թվում էր, թե Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Հայաստանի Հանրապետության մի զգալի մասում խորհրդային կարգ հռչակվելուց հետո կպաշտպաներ հայ ժողովրդի շահերը և քեմալականներից կպահանջեր նրանց կողմից զավթած հայկական տարածքները: Բայց միայն թվում էր. պատմությունը հակառակ գնաց տրամաբանությանը: Խորհրդա-թուրքական «ջերմագին» մերձակցությունը հանգեցրեց նրան, որ 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրվեց խորհրդա-թուրքական «բարեկամության և եղբայրության» մասին պայմանագիրը, որում Արևմտյան Հայաստանի մասին ոչ մի հիշատակություն չկար: Դա «Նոր Թուրքիայի» դիվանագիտության հաղթանակն էր, հիրավի հաղթանակն էր, քանզի քեմալականներն իրենց «Ազգային ուխտի» մեջ Արևմտյան Հայաստանն արդեն հայտարարել էին Թուրքիայի անբաժանելի մասը:

Պայմանագիրը, փաստորեն, դիվանագիտորեն ամրագրում էր այդ իրողությունը: Պայմանագիրը վավերացրեց 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի ժամանակ քեմալականների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքների զավթումը: Թուրքիային մնաց Հայաստանի Հանրապետությունից զավթած Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Կաղզվանի, Արդահանի, Օլթիի օկրուգները և հարակից այլ տարածքներ՝ շուրջ 19,245 քառ. կմ[13]: Թուրքական պատվիրակությունն ամեն միջոցի դիմեց Նախիջևանի գավառը «կրտսեր եղբայր» Խորհրդային Ադրբեջանին հանձնելու համար: Պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանը, որը գտնվում էր Արարատյան աշխարհի կենտրոնում, հայերից խլվեց և դրվեց Խորհրդային Ադրբեջանի հովանավորության տակ: Ավելին, Շարուր-Դարալագյազի գավառից անջատվեց Շարուրի ամբողջ տարածքը և միակցվեց Նախիջևանի գավառին: Այլ խոսքով՝ Խորհրդային Հայաստանից պոկվեց ևս 5,5 հազար քառ. կմ
տարածք: Այսպիսով, խորհրդա-թուրքական 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով Հայաստանը կորցրեց ավելի քան 25 հազար քառ. կմ տարածք: Հիշենք, որ դրանից հետո քեմալականներին անհրաժեշտ եղավ ավելի քան 10 տարի դիվանագիտական զանազան միջոցների դիմել, որպեսզի անմիջական տարածքային կապ հաստատեն արդեն Ադրբեջանի կազմում ինքնավար հանրապետություն դարձած Նախիջևանի հետ: Եվ դա նրանց հաջողվեց. 1932 թ. հունվարի 23-ին Թուրքիայի և Իրանի միջև կնքվեց հատուկ համաձայնություն, որով երկու երկրները տարածքների փոխանակում կատարեցին Արարատ լեռան շրջանում: Նեղ մի շերտով Թուրքիան անմիջականորեն կապվեց Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ, որով և իրականացավ պանթուրքիստների կողմից վաղուց ծրագրվածը[14]:

Խորհրդա-թուրքական 1921 թ. մարտյան պայմանագրից հետո, տասնամյակներ շարունակ Հայկական հարցը դուրս մնաց դիվանագիտական քննար-

---

[13] *Տե՛ս* Бюллетень центрального статистического управления, 1921, ¹ 5, с. 10.

[14] *Տե՛ս* Д. С. З а в р и е в. Восточная Анатолия. Экономические очерки. Тифлис, 1936, с. 8.

կումներից: Այն դիվանագիտական խոսակցության առարկա դարձավ մեկ էլ Հայրենական մեծ պատերազմից հետո: 1945 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը Բեռլինում (Պոտսդամում) տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակած երեք մեծ տերությունների ղեկավարների (ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) խորհրդաժողովը, որը նվիրված էր հետպատերազմյան տարիներին սոցիալական տարբեր կարգ ունեցող երկրների քաղաքական և ռազմական համագործակցության հարցերին: Համաժողովին մասնակցում էին Ի. Ստալինը, Հ. Տրումենը, Ռ. Չերչիլը (հուլիսի 28-ից՝ Կ. Էտլին), արտաքին գործերի նախարարներ, փորձագետներ: Համաժողովի պաշտոնական բացումից մեկ օր առաջ, հուլիսի 16-ին, ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ. Մոլոտովի և Անգլիայի արտաքին գործերի նախարար Ա. Իդենի միջև տեղի է ունենում զրույց, որի ընթացքում քննարկվում են երկու կարևոր հարց՝ ա) Բոսֆորի և Դարդանելի նեղուցների, բ) թուրքերի կողմից 1920 թ. բռնագրաված հայկական հողերի հարցերը: Զրույցի ժամանակ Վ. Մոլոտովը հատկապես ընդգծում է, որ 1921 թ. թուրքերն օգտվեցին խորհրդային պետության թուլությունից և նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Հայերը Խորհրդային Միությունում իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառով էլ խորհրդային կառավարությունը բարձրացնում է Խորհրդային Միությանը օրինաբար պատկանող տարածքներն իրեն վերադարձնելու հարցը... Այնուհետև հայկական հողերի հարցին բուն հանձնաժողովը անդրադարձավ հուլիսի 22-ին: Այստեղ ևս Մոլոտովը խոսում է հայկական հողերի նկատմամբ Խորհրդային Միության պահանջատիրության մասին[15]: Սակայն ինչպես և պետք էր սպասել, հարցի քննարկումը ոչ մի էական արդյունք չի արձանագրում, քանզի ԱՄՆ-ը Թուրքիային արդեն վերցրել էր իր հովանավորության ներքո: Բայց մեզ հետաքրքրում է հարցի ոչ այնքան այդ կողմը, որքան այն, թե ինչպես էր խորհրդային կառավարությունը նենգափոխում 1920–1921 թթ. խորհրդա-թուրքական հարաբերությունների իրողությունը, պարզ այն իրողությունը, որ Մոսկվայի պայմանագիրը համաշխարհային կոմունիստական հեղափոխության հովերով խորհրդային բոլշևիկների գործարքն էր «համաշխարհային իմպերիալիզմի դեմ» պայքարի դրոշ պարզած և երիտթուրքերի գործն անշեղ շարունակող քեմալականների հետ, որոնք իրենց զավթողական նպատակներին հասնելուց հետո Ռուսաստանին պիտի համարեին իրենց համար առաջին թշնամին: Այդ պայմանագիրը ոչ միայն անբարոյական էր իր հակահայկականությամբ, այլև չէր բխում Ռուսաստանի ազգային-պետական շահերից: Այս առումով շատ ճիշտ և դիպուկ է գրել մերօրյա ռուս պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Իգոլկինը. «Մոսկվայի պայմանագիրը մի իրողություն է, որը լիովին դուրս է ռուս-թուրքական պատմության ամբողջ նախընթացից: Իր էությամբ այդ ընդհանուր ոչինչ չունի Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված նախորդ բոլոր պայմանագրերի հետ, ինչպես մեզ համար հաղթական, այնպես էլ պարտություն կրած պատերազմներից հետո (օրինակ՝ Ղրիմի պա-

[15] *Տե՛ս* Советский Союз на международных конференциях… Сборник документов. Т. VI. М., 1984, с. 135–136.

տերազմը): Նախկինում ցանկացած իրադրությունում, ռուսական պետական գործիչները ղեկավարվում էին ռուսական պետական շահերով: 1921 թ. Մոսկվայի պայմանագիրը կնքվեց Լենինի կողմից՝ արհամարհելով Ռուսաստանի պետական շահախնդրությունները: Սակայն այդ պայմանագիրը ամբողջովին օրինաչափ էր բոլշևիկների համար, ովքեր ծառայում էին ոչ թե Ռուսաստանին, այլ տեսիլքին, համաշխարհային հեղափոխության ուրվականին: Բայց եթե անգամ Մոսկվայի պայմանագիրը գնահատենք հենց իրենց՝ բոլշևիկների ընտրած չափանիշով, ապա այդ դեպքում ևս այն չի կարելի կոչել խոհեմության դրսևորում: Թուրքիան չդարձավ իմպերիալիզմի դեմ ազգային-ազատագրական պայքարի ավանգարդ: Քեմալական ղեկավարությունը, երբ լիակատար տիրեց իշխանությանը, ոչ մի բանում երևան չբերեց իր զինակցությունը Կոմինտերնին»[16]:

Լիովին համաձայն ենք պատմականությունից բխող խորունկ ու խոհեմ վերոհիշյալ հարցադրումների հետ, համաձայն ենք, քանզի դրանք մերկացնում են Թուրքիային տարածքներ հանձնելու խորհրդային կառավարության պատճառաբանությունը՝ երիտասարդ Խորհրդային Ռուսաստանի դժվարություններն ու թուլությունը: Իսկ ինչի՞ մասին են վկայում պերճախոս փաստերը: Պայմանագիրը ստորագրված տարվա, 1921 թ., ընթացքում Խորհրդային Ռուսաստանից Թուրքիան ստացավ 33 275 հրացան, 5 800 00 փամփուշտ, 327 գնդացիր, 58 հրանոթ, շուրջ 130 հազար արկ, 1 500 սուսեր, 20 000 հակագազ, ծովային երկու ռմբակոծիչ և այլ զենքեր: Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային 1921 թ. աշնանը տվեց 6,5 միլիոն ռուբլի ոսկով՝ անհատույց[17]: Սրանք թվեր են, որ ինքնին հաստատում են Խորհրդային Ռուսաստանի «թույլ» լինելու մասին արտաքին գործերի ժողկոմի բացահայտ սուտը: Վերստին ցանկանում ենք ընդգծել, որ մարտի 16-ի պայմանագիրը քեմալիստների ակնառու հաղթանակն էր, ակնառու, քանզի Առաջին աշխարհամարտից դուրս գալով որպես պարտված պետություն, որը Սևրի պայմանագիրը գործողության մեջ դնելիս վերածվելու էր թույլ մի պետության, քեմալականները կարողացան ոչ միայն այդ պայմանագիրը չեղյալ հայտարարել, այլև տեր դառնալ Օսմանյան կայսրությանը չպատկանած, բայց ագրեսիայի միջոցով զավթած ավելի քան 25 հազար քառ. կմ նոր տարածքի:

Ճշմարտությունը մեկն է՝ Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը քաղաքական-դիվանագիտական մի անվայելուչ, անբարոյական խաղ էր, որ Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը վարեց այնքան չարչրկված Հայկական հարցի շուրջը: Ամենից անբարոյականն ու ապշեցուցիչն այն էր, որ հայ ժողովուրդը, հանձին իր դիվանագիտական պաշտոնական պատվիրակության, այդ դիվանագիտական խաղից դուրս թողնվեց:

---

[16] А. И г о л к и н. Московский договор с Турцией. Взгляд из России через 77 лет.– ИФЖ, 2000, № 1, с. 7.

[17] *Տե՛ս* Документы внешней политики СССР. Т. III. М., 1959, с. 675.

Քաղաքական-դիվանագիտական հակահայկական խաղի հաջորդ քայլը Խորհրդային Ռուսաստանի կողմից արվեց 1921 թ. հուլիսի 5-ին, երբ որոշում ընդունվեց Արցախը թողնել Ադրբեջանի կազմում՝ նրան տալով ինքնավարություն: 1923 թ. հուլիսին Ադրբեջանական ԽՍՀ կազմում ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ դարձյալ չհարցնելով հայ ժողովրդի կարծիքը:

Կատարվածի հետևանքները հայ ժողովրդի վրա ծանրացած են առ այսօր:

Վերջին հարյուրամյակների պատմությունն արձանագրել է, որ, ռազմավարական լայն իմաստով, Օսմանյան կայսրությունն ավանդաբար միշտ եղել և մնում է Ռուսաստանի հիմնական հակառակորդը հարավկովկասյան և միջինարևելյան տարածաշրջաններում: Բայց, ցավոք, եղել են նաև մերձեցման մարտավարական ժամանակներ: Այդպիսին էին գրեթե ամբողջ 1920-ական թվականները, նման պահ է նաև արդի ժամանակաշրջանը, երբ հանուն շահի, երբեմն, տեղի է ունենում ռուս-թուրքական մերձեցում, մերձեցում, որը շրջանցում է, այսպես կոչված, «ռազմավարական դաշնակցի» կարծիքը:

РОССИЯ И АРМЯНСКИЙ ВОПРОС

НОРАЙР САРУХАНЯН

Р е з ю м е

Проникающая в Закавказье и на Ближний Восток Российская империя, в соответствии со своей традиционной политикой вербовки сторонников в приграничных странах, рассматривала армянский народ как одну из тех сил, которая могла в определенной степени способствовать достижению ее региональных политических и военных целей. Однако с начала XIX в. и, в частности, после разгрома наполеоновских армий и взятия на себя роли вдохновителя Священного союза, царизм прекратил политическое заигрывание с армянами. Не отказываясь от своей прежней тактики – - обещать и обнадеживать, – царизм и в дальнейшем старался использовать христианские народы, просящие у него помощи, в политике новых территориальных приобретений, с той лишь разницей, что под покровительством России, взамен армянского царства или автономии, армяне должны были довольствоваться тем, что величайшей милостью становились царскими подданными. Но политически наивно настроенные армянские общественные деятели продолжали питать определенные надежды на освобождение Западной Армении, и даже более того – на воссоздание армянской государственности. Значительно позднее стало ясно, что Российская империя вовсе не - намерена осуществить чаяния армян на создание собственного государства или автономии. Свержение самодержавия, изменение политической ситуации в стране вновь породили надежды на решение Армянского вопроса. Армянские общественные круги поддерживали продолжение первой мировой войны до победного конца, поскольку с победой России и поражением Турции связывали надежды на освобождение Западной Армении и восстановление собственной государственности. Однако Западная Армения интересовала Временное правительство как будущая часть России. А после Октябрьского переворота в революционной, большевистской Москве сразу же - зазвучали лозунги «Во имя мировой революции», «Советская Россия – авангард революционного антиимпериалистического Востока». Пришедшее к власти в Турции «антиимпериалистическое», националистическое правительство Мустафы Кемаля не признало Севрский договор 1920 г. Кема-

листы приложили все силы для того, чтобы предотвратить его реализацию. В качестве одного из первых шагов началось сближение с большевистской Россией. Этому содействовала и сама Москва, которая рассматривала кемалистское движение как «антиимпериалистическую революцию», безвозмездно предоставляя туркам оружие, боеприпасы и многомиллионные суммы золотом. Получив эту помощь и воспользовавшись сложившимся в Закавказье положением, турки в конце октября 1920 г. напали на Армению, ложно представляя свое нашествие войной против союзника империализма. Потерпевшая поражение в войне Республика Армения 2 декабря 1920 г. подписала с Турцией кабальный Александропольский договор, в результате чего к кемалистской Турции отходили Карсская область и Сурмалинский уезд (свыше 20,7 тыс. кв.км.), а районы Нахичевана, Шарура и Шахтахти объявлялись временно находящимися под защитой Турции. В тот же день Республика Армения была вынуждена подписать с Советской Россией соглашение, согласно которому правительство Армении уступало власть большевикам, в Армении устанавливался советский режим. 16 марта 1921 г. в Москве был заключен советско-турецкий договор «О дружбе и братстве». По этому договору к Турции отошла входившая прежде в состав Российской империи территория 23600 кв. км., в том числе Карсская область и Сурмалинский уезд. Были отделены от Армении и переданы «братскому» Советскому Азербайджану Нахичеванский уезд, бульшая часть Шарур-Даралагязского уезда. Отрадно, что наш современник, известный русский историк Александр Иголкин (см. статью “Московский договор с Турцией. Взгляд из России через 77 лет”.– ИФЖ, 2002, ¹1), опираясь на неоспоримые факты и анализируя их, утверждает, что советско-турецкий договор по сути дела имеет не только антиармянский, но антирусский характер, потому что «московский договор» – событие, полностью выпадающее из всей предшествующей русско-турецкой истории. По своей сути он не имеет ничего общего со всеми предыдущими договорами России и Турции, завершившими как победоносные для России войны, так и ее поражения (например, в Крымской войне). Прежде в любой ситуации русские государственные деятели руководствовались российскими интересами. Московский договор 1921 г. заключался при полном игнорировании Лениным государственных интересов России. Однако этот договор был вполне закономерен для большевиков, служивших не России, а фантому, призраку мировой революции. Однако даже оценивая Московский договор по критерию, выбранному самими большевиками, его никак нельзя назвать проявлением мудрости. Турция не стала авангардом национально-освободительной борьбы с империализмом. Кемалистское руководство, получив всю полноту власти, ни в чем не проявило себя союзником «Коминтерна».

RUSSIA AND THE ARMENIAN QUESTION

NORAYR SARUKHANYAN

S u m m a r y

The Armenian Question appeared in the view of the foreign policy of Russia at one of the latest stages of the Eastern Question, which was the key point of the Russian attention during the whole 19th century and at the beginning of the 20th century. Strengthened Russian Empire sought to confirm its positions in Balkans and the Transcaucasus and get access to the “warm seas”. It was exactly this intention of Russia that became a reason not only for Russo-Turkish confrontation but also for complication of the relationship with the Leading European Powers, which were not at all interested in the intensification of Russian position in the Near East Region. Bringing into life its foreign policy plans, Russian diplomacy widely used the opportunity of interfering into the home policy of Turkey, making pressure on the ruling spheres of the country with the

pretext of protection of the Christian Nations interests, and the Armenians among them, which were under the control of the Ottoman Empire. This policy of Russia became a basis for the formation of Russian political orientation not only for East but also West Armenians, which was many times manifested during the Russo-Turkish wars. Armenian socio-political spheres had big expectations from Russia in terms of the solution of the Armenian Question, liberation of West Armenia from the Turkish yoke and restoration of the Armenian State. However, in the flow of time it became obvious that royal authorities were not inclined to realize the Armenians' hopes. The fact that during World War I the occupied territories of West Armenia were used for the creation of military general-governance of Turkish regions clearly evidenced that the royal authorities didn't even think about the creation of any autonomy for the Armenians and that after the end of the War, in case the territory was kept in hands of Russia, the general-governance could easily be changed into ordinary Russian province. Provisional government of Russia was also interested in West Armenia in terms of its economical acquisition. Declaring the territories of West Armenia to be Turkish, the Moscow and Kars Agreements of 1921 evidenced that Soviet Russia also was absolutely not interested in the solution of the Armenian Question.